
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1901 ԹՎԱԿԱՆԻՆ

ՍՈՒՄԱՆՆԱ ՀՈՎՃԱՆՆԻՍՅԱՆ

«Աշխարհքում եթե մի քանի լավ բաներ կան – մեկն, անշուշտ, ճանապարհորդությունն է: Ճանապարհորդելով մարդու և՛ աչքն է բացվում, և՛ սիրտը»¹:

Հովհ. Թումանյան

Անցյալ դարի առաջին տարիները Թումանյանի ստեղծագործական վերելքի շրջանն էր: 1903 թ. ժողովածուն նրա բանաստեղծական ոգևորության խոշոր բռնկումներից էր, նվաճում, գեղարվեստական տեսողության գորացման, բանաստեղծի տաղանդի հասունացման արտահայտություն, արվեստի կատարելության դրսևորում, բյուրեղացում: Ստեղծագործական որոնումների շրջանը հանգեցրեց լավագույնի հայտնաբերմանը, մարդագիտության ոլորտում հետաքրքրական բացահայտումներին:

XX դարասկզբի այդ արտասովոր ներշնչանքն ու ոգևորությունը, արվեստի նոր հորիզոնների նվաճումը չէր կարող պայմանավորված չլինել բանաստեղծի կյանքի հանգամանքներով: Այդ վերելքը Թումանյանի ապրած կյանքի բնականոն արտացոլքն էր: Ստեղծագործական երկամյա տևական (1901-1903 թթ.) ոգևորությունը պայմանավորված էր նաև կենսական լիցքերով, գրական աշխատանքին ուղեկցող հոգեբանական գործոններով:

Ըստ գրականագետ Լևոն Հախվերդյանի՝ XX դարի առաջին տարիները՝ Վերնատան տարիները, Թումանյանի «չգիտակցված երջանկության» տարիներն էին, որովհետև բանաստեղծը չգիտեր, որ այլևս երբեք, մինչև կյանքի վերջը երբեք չի գտնելու հանգիստ աշխատելու հնարավորություն, չի ապրելու ստեղծագործական կյանքի այդպիսի վերելք²: Վերջինս պայմանավորող գործոններից է այն, որ այդ տարիներին Թումանյանը շատ է ճանապարհորդել, տպավորվել և ստեղծագործել:

Թումանյանը գրողի համար բարեբախտություն էր համարում ճանապարհորդելու հնարավորությունը, որովհետև միայն այդպես կարելի է հասնել տպավորությունների հարստության, հակառակ դեպքում՝ «...վայ այն բանաստեղծին, որ աղքատ է տպավորություններով» (9, 268): Բանաստեղծն ինքն իրեն «այդ կողմից բախտավոր» չէր համարում: Կյանքն ու պայմանները Թումանյանին աշխարհներ տեսնելու հնարավորություն չընձեռեցին: Թեպետ նրա բարե-

¹ Հ ո Վ Ի Թ ո Մ Ա Ն Կ Ա Ն . Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. 9, Երևան, էջ 278 (այսուհետև՝ հատորը և էջը կնշվեն մեջբերումներին կից):

² Մեծերը ամենամեծի մասին (Վերնատան անդամները Թումանյանին), կազմող և առաջաբանի հեղինակ Լ. Հախվերդյան, Երևան, 1999, էջ 4:

կամներն ու ընկերները հաճախ էին փորձեր անում նյութական միջոցներ գտնել նրա արտասահմանյան ուղևորությունների համար, սակայն ապարդյուն. երբեմն բանաստեղծն ինքն էր հրաժարվում՝ չկարողանալով անտեսել իր բազմաթիվ պարտատերերին: 1901 թ. այդպիսի մի փորձ արեցին Բաքվի հայ գրասերները, որոնք ամեն ինչ արեցին Թումանյանին նյութապես օժանդակելու համար, որպեսզի նա ուղևորվի Ռուսաստան, բայց չկարողացան: Ինքը՝ բանաստեղծը, Հայաստանի գավառներում շրջելը պակաս կարևոր չէր համարում, քան աշխարհով մեկ շրջելը: Ա.Ղլտճյանին ուղղած նամակում Թումանյանը գրում է. «Ես ու Աղայանը որոշել ենք գնալ գավառները՝ նյութեր հավաքելու: Ահա քեզ Ռուսաստանից ավելի կարևոր մի բան» (9, 249): Բհարկե, Թումանյանը մեծ ցանկություն ուներ տեսնելու Պուշկինի և Տոլստոյի, Լերմոնտովի և Դոստոևսկու հայրենիքը, սակայն «...ինչպե՞ս կարող եմ Ռուսաստան գնալ՝ ...ետևիցս թողնելով մի այսպիսի մանրապճեղ ընտանիք ու պարտքատերերի բազմություն» (9, 248):

Եվ, իրոք, 1901 թ. Թումանյանին չի հաջողվում ո՛չ Ռուսաստան գնալ, ո՛չ էլ Ղ. Աղայանի հետ ճանապարհորդել, բայց այդ տարվա ամառը նրա համար դառնում է տպավորությունների հարստացման, ստեղծագործական ոգևորության տարի:

1901 թ. Թումանյանի ուղևորությունների առաջին կանգառը Ուրավելն էր՝ Բելի Կլոյչը, ուր նա հասավ հունիսի 21-ին³: Առաջին գիշերը հյուրընկալվում է Կարապետ Գալֆայանին, որը վարձել էր փայտե մի տնակ՝ լվերով լեցուն: Այդ շրջանում Ուրավելում կառուցվող բոլոր տները փայտից էին, քանի որ կառավարությունն իրավունք չէր տալիս քարե տներ կառուցելու: Անքուն «դժոխսալին» գիշեր անցկացնելուց հետո Թումանյանը փորձում է ավելի լավ պայմաններով քարե տուն գտնել: Թանկության պատճառով հրաժարվում է 65 ռուբլով վարձով տրվող բնակարանից և 30 ռուբլով վարձում է նախկին հիվանդանոցի՝ հոսպիտալի՝ գրեթե ավերակների վերածված, սակայն նորոգվող ու քարաշեն խոհանոցը: Ընդ որում, տանտերը խոստացել էր օգոստոսի 1-ից հետո վարձը դարձնել 20 ռուբլի: Սակայն երբ ավելի բարեկարգ 65 ռուբլով վարձով տրվող տան տերը ծանոթանում է Թումանյանի հետ և տեղեկանում, որ նա Տեր Թադևոսի որդին է, անմիջապես խնդրում է կես գնով, թեկուզ անվճար մնալ իր տանը, որպեսզի կարողանա գեթ մի քիչ փոխհատուցել Տեր Թադևոսին այն բոլոր լավությունների դիմաց, որոնք նա արել էր Գյառգյառում ուսուցիչ աշխատելիս: Բայց Թումանյանն անվճար տրամադրվող կենցաղային պայմաններից ու հարմարություններից հրաժարվում է, թեև դեռ չէր տեղափոխվել նոր վարձած բնակարանը, սակայն արդեն խոսք էր տվել: Ոչ մի գայթակղիչ առաջարկ չէր կարող սասանել, խախտել Թումանյանի տված խոսքը, որը նրա համոզմամբ միշտ տիրոջ իրավունք ունի խոստացողի նկատմամբ:

³ Ժամանման օրը պարզ է դառնում Փիլ. Վարդապարյանին ուղղված հուլիսի 20-ի նամակի թվագրությունից՝ «Այսօր ուղիղ մի ամիս է, որ ես Ուրավել եմ», ինչպես նաև կնոջը՝ Օլգա Թումանյանին ուղղած հունիսի 22-ի գրեթե անընթեռնելի թվագրության համադրությամբ (9, 593):

Առաջին օրերին Թումանյանն աշխատում է նոր ծանոթություններից խուսափել և հանդիպում էր հիմնականում Կարապետ Գալֆայանին, որի հետ անտառներում զբոսնելիս վիճում և գրուցում էր Աստծո գոյության, ամուսնական կյանքի օգտակարության, «Մշակի» «լրբության» մասին⁴: «Մրտիս ուզած ժամանակ, – գրում է Թումանյանը, – խոսում էի Շեքսպիրի, Գյոթեի, Նիցշեի ու Բրանդեսի հետ ու կրկին խաղաղ մենակ մտորում, մինչև որ Գալֆայանը գոռում էր դիմացի բլրից – բանաստեղծ հայոց, այստեղ՝ անտառում, քո մուսաները ման են գալիս և այլն և այլն, և դաչնիկները դուրս էին թափում թամաշա անելու «խելառին» (9, 263):

Թումանյանի, այսպես կոչված, մենակությունը տևում է մեկ-երկու օր: Բանաստեղծը զարմանքով պարզում է, որ այդ քաղաքում ոչ միայն ճանաչված է, այլև սիրված. «...հայտնվեց, որ ես այդ քաղաքում անծանոթ դարիք չեմ, հայտնվեցին շատ բարեկամներ, որոնցից շատ շատերին, իհարկե, չեմ ճանաչում» (9, 249): Պարզվում է նաև, որ այդ փոքրիկ քաղաքում իր բոլոր բանաստեղծություններն անգիր գիտեն, գիտեն նույնիսկ իր ժողովածուների տպագրության տարեթվերը, ուշադիր հետևում են մամուլում նրա յուրաքանչյուր ստեղծագործության հրապարակմանը. «...մի խոսքով, շուտով տարածվեց, որ ես ազգային ջոջ եմ, ոչ թե Վարչավից եկած մի հրեա վաճառական» (9, 250): Թումանյանը այս ասելով, նկատի ուներ իր արտաքինը, հագուստը, «նոր առած գլխարկը», որոնք նրան եվրոպացու էին նմանեցնում:

Ուրավելում տարածված և սիրված է եղել Թումանյանի 1891 թ. գրած «Կանչ» («Եթե կաս, Աստված») բանաստեղծությունը, որն այդ օրերին հեղինակին ա-

⁴ 1897 թ. Կ. Գալֆայանը Թումանյանի միջնորդությամբ և բարեգործական ընկերության միջոցներով մեկնում է Փարիզ՝ դերասանական արվեստը կատարելագործելու: «Մշակը» տպագրում է (1897, №6) Արշակ Հարությունյանի «Նամակ խմբագրությանը» հոդվածը, որտեղ ծաղրոծանակի է ենթարկում Կ. Գալֆայանին: Թումանյանն անմիջապես պաշտպանության տակ է առնում երիտասարդ դերասանին՝ դատապարտելով բոլոր նրանց, ովքեր դափնիներով են որոշում տաղանդը, մինչդեռ «հասկացող մարդը երեխայի խզրգանքից կամ տունիկներ շինելուց է կարողանում նկատել ապագա նկարչին ու ճարտարապետին»: Բանաստեղծը պաշտպանության տակ է առնում Ս. Մ. Ծոցիկյանի «Ապագա դերասանը» հոդվածի դրվատական խոսքը Գալֆայանի մասին («Արձագանք», 1897, №2): Գալֆայանին պաշտպանելով՝ Թումանյանը «Տարագում» տպագրում է իր հրապարակախոսության փայլուն էջերից մեկը՝ «Տաղանդ և բթամտություն» հոդվածը, որը պատասխանն էր Հ. Սևյանի «Թատրոնի շուրջը» հոդվածի, ուր հեղինակը ծաղրոծանակի է ենթարկում Կ. Գալֆայանին՝ ասելով. «...Հայտնվեց այս նորածինը, մեր աչքի առաջ եղած ոչինչը վեց ամիս հետո մի ինչ դարձավ, մի տարուց հետո տաղանդ և այժմ, մոտ երկու տարի՝ «աստղ», «արտակարգ երևույթ» («Մուրճ», 1898, №10-11, էջ 1578-1579): Թումանյանը պատասխանում է դիպուկ և սուր, իրեն այնքան բնորոշ ասութային արժեք ունեցող բանաձևով՝ «Մի գաղտնի խորհրդով տաղանդի երևույթից միշտ վրդովվում է բթամտությունը» (6, 1994, 110-111), որը միշտ խեղդում է ու աշխատում է խեղդել տաղանդը, բայց երբ չի հաջողում և տաղանդը հարթում է իր ճամփան, անամոթ ճակատով կանգնում ու նրան կոտր է դարձնում: Գալֆայանը 1900 թ. ամռանը եղել էր Պոլսում հյուրախաղերով, «Մշակը» դարձյալ իր հեզնական վերաբերմունքն էր դրսևորել («Մշակ», 1900, №154): Բնական է, որ «լրբություն» ասելով Գալֆայանը նկատի է ունեցել հենց այդ վերաբերմունքը, որը շարունակությունն էր Պետրոս Ադամյանի հանդեպ հալածանքների: Ադամյանի խաղը «Մշակը» համարել էր անբնական, արվեստական, տգեղ, իսկ տաղանդներին բաժանելով տանելի և անտանելի, Ադամյանին նույնիսկ անտանելի տաղանդ չէր համարել («Մշակ», 1879, №224):

առանձնապես դուր չէր գալիս, բանաստեղծություն, որը չարին պատժելու կոչ էր Աստծուն, միաժամանակ աղերս ու պահանջ, բանաստեղծություն, որի տպագրությունը «Մուրճում» ժամանակին արգելել էր գրաքննությունը, այդ պատճառով էլ առաջին անգամ ոչ թե մամուլում, այլ ժողովածուում լույս տեսավ: Ի դեպ, բազմաթիվ վկայություններ կան, որ «Կանչը» շատ սիրված է եղել ժամանակակիցների կողմից: Քննադատ և մանկավարժ Գ. Վանցյանը 1893 թ. ապրիլի 8-ին բանաստեղծին հղած նամակում գրում է. «Կանչը» ամեն տեղ ֆուրոր է անում... Եթե, Հովհաննես ջան, ուրիշ ոչ մի բան չգրեիր, այդ ստեղծագործությունը բավական էր քեզ բանաստեղծի կոչմանը արժանացնելու: ...Ունիս, այո, շատ գեղեցիկ բաներ... բայց «Կանչը» դա գլուխգործոց է, դա մի գոհար է»⁵: Նույնն են վկայում Ներսիսյան դպրոցի Թումանյանի դասընկերներ Արամ Առաքելյանը (ՈւՂ, 4, 314) և մանկավարժ, թարգմանիչ Ջալալ Տեր-Գրիգորյանը (ՈւՂ, 4, 318):

Եթե կաս, Աստված,
Մեղմացրու մարդկանց
Կիրքն ամբարտավան:
Եթե Աստված ես դու խաղաղության,
Ինչո՞ւ տակավին
Չես պատժում չարին,
Ու յժո՞ղ է պակասում,
Թե չենք աղերսում,
...Թե՞ դու չըզիտես,
Որ այստեղ, երկրում
Մարդը ժպտերես
Մարդ է գիշատում,– (1, Երևան, 1988, 85, 86)

Այնպես որ, Թումանյանին առանձնապես չի զարմացնում, որ հենց այդ բանաստեղծությունն անգիր գիտեին գրեթե բոլորը: Քաղաքագլխի հետ ծանոթանալուց հետո Թումանյանն էլ ավելի նշանավոր հյուր է դառնում: Մակայն Թումանյանը շատ ավելի ցանկություն ուներ ընթերցանությամբ զբաղվելու, այդ պատճառով էլ իր հետ մեծ քանակությամբ գրքեր էր բերել ու դեռ ավստում էր, որ քիչ է բերել: Եվ նա ցավում էր, որ «առաջին օրերը միայն բավական կարդացի» (9, 258): Ուրավելում ստանում էր «Նովոյե օբոգրենիյե», «Մշակ», «Տարագ» պարբերականները, կարդում և տրամադրում էր ուրիշներին: Այստեղ էլ նրա տունը դառնում է գրասերների հավաքատեղի.

«...Ուրիշներն էլ ինձանից են վերցնում. գրադարանը իմ տունն է» (9, 259):

Հուլիսի 11-ին Թումանյանը տեղափոխվում է նոր սենյակ՝ «անտառի մեջ կամ մոտ»: Թեև Ուրավելը ամառանոցային քաղաք էր, ուներ գետ, անտառ, աղբյուր, սակայն բավական խոնավ էր ու «ճահճային տեղ» (9, 265): Թումանյա-

⁵ Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հ. 4, Երևան, էջ 313 (այսուհետև՝ ՈՒՀ, հատորը և էջը կնշվեն մեջբերումներին կից):

նի համար Ուրավելը առանձնապես գեղեցիկ չէր, որովհետև «ընկած է փոսի մեջ, հորիզոն չունի» և որպես ամառանոց իր ժամանակի համար «զուրկ էր բոլոր հարմարությունից» (9, 252): Մակայն Թումանյանը Ուրավել չէր եկել բնությամբ հիանալու: Նա վատառողջ էր և կարիք ուներ հանքային ջրերի բուժիչ ներգործության: Հունիսի վերջին օրերին հիվանդության ընթացքը սրվում է, և բանաստեղծը ընդունում է նախ տաք լոգանքներ, որից հետո՝ սառը, սկզբում՝ օրը երկու անգամ երեքից հինգ բուսե տնդությամբ, հետո՝ մեկ: Ամեն օր հանդիպում էր հանքային ջրերի վերատեսուչներին՝ («բանչիկներին»)՝ Ակոփ աղային և Ստեփանին (9, 268):

Առողջարանային բուժումը, հատկապես սառը լոգանքները, քաղաքի հոգսերից ու աղմուկից հեռու, սիրով ու ջերմությամբ շրջապատված լինելը, Կարապետ Գալֆայանի ընկերակցությունը բարեբար ազդեցություն են ունենում, և Թումանյանը զգում էր. «Ջղայնությունս գրեթե անցել է» (9, 255): Մեկ այլ նամակում նա գրում է. «...Ջուրն էլ է օգնում, օդն էլ, բայց մանավանդ ազատ լինելը» (9, 259): Ուր երեխայի հայրը դեռ երբեք իրեն այդքան ազատ չէր զգացել ընտանիքի հոգսերից: Թեև այստեղ էլ տասը օրով նրա խնամքին էր հանձնվել Երվանդ Լալայանի աներոջ՝ Հարություն Հարությունյանի որդին՝ 5-րդ դասարանցի մի գիմնազիստ: Թումանյանը նրան պահում է երկու-երեք շաբաթ: Միայն օգոստոսի սկզբին Հարությունյանի ընտանիքը գալիս է Ուրավել և որպես շնորհակալություն փորձում է թույլ չտալ Թումանյանին մեկ այլ տեղ ճաշել: Մակայն դա ոչ մեկին չէր կարող հաջողվել, որովհետև Թումանյան-մարդը հսկայական այնպիսի դրական էներգիա ուներ, որ միշտ իրեն էր ձգում մեծից փոքր անխտիր բոլորին՝ անկախ դասային, սոցիալական, կուսակցական պարտականություններից: Այսպես, հուլիսի 10-ին 10-12 ուսուցիչներ, գիմնազիստներ, բժիշկներ և այլ մասնագիտության երիտասարդներ Թումանյանին հրավիրում են խնջույքի՝ բնության գրկում, անտառի փեշին, գետի ափին: Նույն օրը Թումանյանի բեմադրությամբ [«...ռեժիսորն էլ ես էի» (9, 255)] տեղի երիտասարդների և ուսուցիչների մասնակցությամբ բացօթյա ներկայացվում է Վասակ Մադաթյանի մեկ արարվածով «Կրոթ-կրոթ» երեքլեզվյան փողնիլը⁶: Որպես բեմ ծառայում էր պատշգամբը, իսկ հանդիսատեսն ունկնդրում էր հոտնկայս:

Հուլիսի 17-ին՝ առավոտյան ժամը 5-ին ուսանողներն ու գիմնազիստները Թումանյանին քնից արթնացնում են և ուղեկցում ուղիղ Ախալցխա, որտեղ բանաստեղծին ինչպես միշտ և ամենուր հրճվանքով են ընդունում: «Թե տեսնես ոնց են պատիվ տալիս այստեղ... ինչ առոք-փառոք», - գրում է Թումանյանը կնոջը (9, 257):

Բայց մի օրում ձիով սար ու ձորերով Ախալցխա գնալն և Ուրավել վերադառնալը հոգնեցնում է վատառողջ Թումանյանին («ջարդված եմ ես») (9, 258):

Հոգնածությունը դեռ չթողափած՝ հուլիսի 18-ին Ախալքալաքից ստանում է, ըստ երևույթին, Վահան Տերյանի եղբոր՝ Ղազար Տեր-Գրիգորյանի (Զավախե-

⁶ Վոդնիլի ձեռագիր մի օրինակ պահվում է Թումանյանի անձնական գրադարանում (տե՛ս Հ. Թումանյանի տուն-թանգարան, № 10-682):

ցի) հրավերը՝ նամակով: Թումանյանի նոր ուղևորության հեռանկարը չէր հրապուրում՝ թե՛ հոգնած էր, թե՛ մեծ ցանկություն ուներ ստեղծագործելու, աշխատելու. «Շատ քիչ եմ պարապում, գրեթե չեմ պարապում, ժամանակ չունեմ, հանգիստ չեն տալիս» (9, 258):

Ուրավելում հանգստացողները հիմնականում ախալքալաքցիներ էին, միայն 4–5 ընտանիք եկել էին Թիֆլիսից ու Բաքվից: Ախալքալաքցիներից Վարդան Շահպարտոնյանը, ինժեներ Հովհաննես Կարապետյանը և ուրիշներ մի քանի օր շարունակ ամեն օր այցելում էին Թումանյանին, նրա հետ բարձրանում սարերը Ուրավելի անտառապատ կիրճերով, խորդուբորդ ճանապարհներով, ուղևորվում Ուրավելից 5 կմ վրա գտնվող ավերակները դիտելու⁷:

Հուլիսի 27-ին բաքվեցի քահանա Գեղամյանների ընտանիքն էր Թումանյանին սարեր հրավիրել: Բանաստեղծը չի կարողանում երկար մնալ՝ չնայած հյուրընկալների թախանձանքին, որովհետև չկար մի օր, որ ինքը հյուրեր չընդուներ, այդ օրն էլ՝ «Շտապում եմ, մոտս մարդիկ են գալու» (9, 266), – ասում է նա:

Որքան էլ մարդկանց բազմությամբ շրջապատված՝ Թումանյանը կարոտում էր ընտանիքին, հարազատներին ու ընկերներին: Մեկ ամսվա ընթացքում կնոջը հինգ նամակ է գրում, թեև ստացել էր միայն երկուսը: Գրում և առանձնապես սպասում էր երեխաների նամակներին: Այսպես, Ուրավելից երեխաներին գրած մի նամակ պահպանվել է միայն Նվարդ Թումանյանի «Հուշեր և գրույցներում»: Այդ նամակում Թումանյանը սովորեցնում էր երեխաներին ուղևորությունների ընթացքում բնության և մարդկանց կյանքի մասին գրի առնել ամեն ինչ՝ ուրախ և տխուր. «Միրելի Մուշեղ, Աշխեն և Նվարդ, ձեր հիշատակարաններն այնքան կարճ են, որ ավելի շուտ մոռացարաններ են... Բնությունը – ժողովուրդը, նրանց կերպարանքը, ապրուստը, ձեր կարծիքը այդ բոլորի մասին, ձեզ հետ պատահած ու ձեր մոտիկներին պատահած դեպքերը»⁸:

Երբ և որտեղ էլ եղել է Թումանյանը, երբեք չի մոռացել ժողովրդական բանահյուսական նյութեր ամբարելու, միննույն լեզենդի, հեքիաթի զանազան տարբերակները ձեռք բերելու, դրանք համադրելու, դրանցում ժողովրդական իմաստությունը հայտնաբերելու գերխնդիրը: Ուրավելը նույնպես բացառություն չէր: Այստեղ հուլիսի 1-ին նա գրի է առնում «Հոգեհանր» լեզենդը, որը պատմում է գիշերով Ղրրիքեսալովը (Կիրքեսալով): Լեզենդը վերաբերում էր Ախալցխայի և Ուրավելի մեջտեղում գտնվող Հոգեհան բարձունքի ստուգաբանությանը, ինչպես Փոցխովի ձորից գեղեցիկ Շամոն ստիպում է իր սիրուց տառապող Համոյին՝ իբրև սիրո հավաստիք իրեն ուսին դրած, սրինգ նվագելով ու պարելով՝ տանել սարի գագաթը, որը, սակայն, դառնում է սիրատենչ և անձնագոհ պատանու գերեզմանը.

– Այժմ քո սերին հավատում եմ ես,

⁷ Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 417 (այսուհետև՝ ԹԺՀ, էջը կնշվի մեջբերումներին կից):

⁸ Ն վ ա ր դ Թ ու մ ա ն յ ա ն ւ ի հ ու շ եր և գրույցներ, Երևան, 1987, էջ 22 (այսուհետև՝ ՆԹ, էջը կնշվի մեջբերումներին կից):

*Այս ժամից ահա քոնն եմ հավիտյան,
Ճըչաց աղջիկը, գըրկեց վերջապես,
Գըրկեց Համոյի... դիակն անկենդան:*

Թումանյանը հեշտությամբ է գրում այս լեզենդը⁹: Պահպանվել է նրա խոստովանությունն այդ մասին իշխանուհի Մարիամ Թումանյանին ուղղված նամակում. «Գիտեք, երբ որ մարդ առողջ է, շուտ է տպավորվում և հեշտ է գրում» (9, 253):

Թումանյանը մտադրվում է ճանապարհորդել մոտակա գյուղերում՝ լեզենդներ և նյութեր հավաքելու, ինչպես նաև աշուղների ու աշուղության մասին տեղեկություններ ձեռք բերելու համար:

Թումանյանը լսում է, որ մոտակա թուրքաբնակ գյուղում մի աշուղ է ապրում: Անմիջապես հրավիրում է նրան: Թեև աշուղի երգացանկն այնքան էլ մեծ չէր, բայց Թումանյանը նրանից գրի է առնում իր կարծիքով Մայաթ-Նովայի թուրքերեն խաղերից մեկը՝ «Ղաղըր մավլամ, դու դըր սան դիլաղըր» («Տե՛ր իմ հզոր, ուզածս այս է քեզանից») սկսվածքով, որն ուղարկում է ընկերոջը՝ Փիլիպոս Վարդազարյանին: Թումանյանը շփոթում էր. նրա գրի առած չափածո ոտանավորը ոչ թե Մայաթ-Նովայից էր, այլ պարսկերեն գրված «Մայադի և Մադաթի» հեքիաթից, որի հեղինակն աշուղ Փասանդին է:

Ուրավելում հիմնականում ապրում էին էրզրումից գաղթած հայերը. որոնք տեղյակ չէին տեղի հինավուրց ավերակների, սար ու ձորերի, գետ ու լճերի հետ կապված ավանդություններին: Հանգամանք, որ ավելի էր մեծացնում Թումանյանի՝ գյուղերում ճանապարհորդելու ցանկությունը. «Բայց որքան մեծ բան է, եթե գրողը կարողանա ճանապարհորդել, ուսումնասիրել իր ժողովուրդն, նրա ավանդությունները, լեզուն, աղաթները: Մաստիկ զգում եմ այս կարիքը ամեն անգամ, երբ լինում եմ ժողովրդի մեջ – ծո՛վ է, ծո՛վ» (9, 264):

Եվ, իրոք, Թումանյանը մտադրվել էր 1901 թ. օգոստոսի սկզբին դուրս գալ Ուրավելից, մի քանի օր մնալ Աբասթումանում, այնուհետև Ախալքալաքի և Շիրակի գավառներով, «եթե հաջողի» (9, 268), Ալեքսանդրապոլից սեպտեմբերի սկզբին, Կարսի երկաթուղով վերադառնալ Թիֆլիս: Մեծ ցանկություն ուներ տեսնել Անին: Ախալքալաքից հրավեր ստանալուց հետո սպասում էր Փիլիպոս Վարդազարյանի նյութական աջակցությանը, որ դուրս գար ամառանոցից, մանավանդ որ վատառողջ էր: Մաստիկ շոգերը խոնավ Ուրավելում անտանելի էին դառնում, և նա ավելի հաճախ էր ջերմում, լեռնային չոր օդի կարիք ավելի շատ էր զգում: Թումանյանն ուզում էր ճանապարհորդել ինչպես լեզենդներ հավաքելու և ժողովրդին մոտ լինելու նպատակով, այնպես էլ Թմկաբերդը տեսնելու համար, որի մասին արդեն լսել էր. «Թմկաբերդի լեզենդան՝ այն կինը, որ ուզեց շահի թագուհին դառնալ» (9, 268):

⁹ Թումանյանը լեզենդը գրել է Ուրավելում, սակայն վերջնական մշակումն ավարտել է նույն թվի դեկտեմբերին և հանձնել է «Մուրճին» տպագրության՝ ծանոթագրելով նաև Հոգեհան լեռան վրացերեն ու թուրքերեն անունները և այն, որ Փոցխովի ձորը Ախալցխայի ձորն է. «Վրացիք ասում են «Մուլթմեդիա» – հոգին դուրս եկավ, իսկ թուրքերը՝ «օղյան փաթթալան» – տղա ճաքեցնող» («Մուրճ», 1902, № 12, 35–37):

Ուրավելում շատերը հողատարածքներ են վերցնում ամառանոցներ կառուցելու համար: Թումանյանը մի պահ նույնպես այդպիսի ցանկություն է ունենում: Պատճառը, հավանաբար, Ուրավելի ջուրն էր, որը բարերար ազդեցություն էր ունեցել բանաստեղծի առողջության վրա. «Մաստիկ սիրեցի Ուրավելի ջուրը..., և առհասարակ հրաշքներ է գործում» (9, 271): Այդ մասին պատմում է նաև Նվարդ Թումանյանը. «Մի օր Ուրավելի ձորով բարձրանում է գետի հունքով... երկար ժամանակ մնում է ջրի մեջ... հանկարծ սառնություն զգում... Եկավ, հիվանդացավ ու սկսեց ջերմը... Հիվանդ ժամանակ շարունակ հիշում էր գետի ջուրը. «Զարմանալի պարզ էր, վճիտ ու սառը...», – շատ էր սիրում Ուրավելը: Մտածում էր երկու սենյակ ունենալ Ուրավելում» (ՆԹ, 104):

Թեև Ուրավելը փոքրիկ քաղաք էր, բայց հանցագործություններն այնտեղ քիչ չէին¹⁰: Այդ պատճառով Թումանյանը մի ատրճանակ էր գնել: Չնայած այդ զգուշությանն ու անհանգստությանը՝ նա իրեն արտաքուստ այնքան ուրախ էր պահում, որ բոլորը համոզվում էին, որ նրա շուրջը միայն ուրախությունն է իշխում. «Այստեղ ինձ շատ են հավանում և իբրև մարդ... ասում են՝ կովելու անընդունակ ես դու» (9, 269):

...Բսկ հրավերքները անվերջ շարունակվում էին, և միննույն մարդուն կամ ընտանիքին մեկ անգամ հրավերն ընդունելը չէր գոհացնում. շուրջբոլորը անվերջ ցանկանում էին վայելել Թումանյանի ներկայությունը: Բնչպես հուլիսի 18-ին, այնպես էլ օգոստոսի 4-ին Թումանյանը ճաշի էր հրավիրված գրող Մադաթ Պետրոսյանի տուն, որի կինը Օլգա Թումանյանի ընկերուհին էր՝ «շարունակ հիվանդ»: Հանդիպում է նաև Արտիկի ախալցխացի ընկերներից մեկի հետ:

Ուրավելի բնակիչներն ու հովեկներն այնպես են կապվում բանաստեղծին, որ մի քանի անգամ խանգարում են Ուրավելին հրաժեշտ տալու նրա մտադրությունը: Ախալցխայում նույնպես սրտատրոփ սպասում էին նրան: Օգոստոսի 6-ին կառք են վարձում և ուղարկում Թումանյանի ետևից: Ուրավելցիները թույլ չեն տալիս, որ նա մեկնի, կառապանին տալիս են հետդարձի վճարը և ճանապարհում առանց Թումանյանի: «Էլ քեֆ, ներկայացում, պարեր, մի խոսքով շատ պատվեցին», – գրում է բանաստեղծը (9, 270): Հարություն Հարությունյանի տանը օգոստոսի 6-ին կազմակերպված այդ խնջույքին ներկա էին ախալքալաքցի երիտասարդներ՝ ինժեներ Հովհաննես Կարապետյանը, Վարդան Շահպարտյանը և ուրիշներ: Թումանյանն այդ խմբի համար հանպատրաստից, «տեղն ու տեղը» երգիծական ոտանավորներ է հորինում և արտասանում՝ չափածո բնորոշելով ամեն մեկին:

Հաջորդ օրը՝ օգոստոսի 7-ի առավոտյան դուրս է գալիս Ուրավելից և ուղևորվում Աբասթուման:

Կարելի է միայն պատկերացնել, թե Թումանյանի ներկայությունը մեկ օր անվելի վայելելու համար կառքը ետ ուղարկած ուրավելցիները ինչպիսի ջերմությամբ ճանապարհեցին սիրելի բանաստեղծին. «Ուրավելի անտառները թնդացին երգերով, ուռաներով ու հրացանների որոտով և երկար ձեռքերի վրա

¹⁰ Օգոստոսի լույս 1-ի գիշերը թալանել էին Թումանյանի լվացք անողի տունը (9, 269):

բարձրացրած թոցնում էին օդի մեջ» (9, 270): Նույնը վկայում է ականատեսը. «Մենք հանաքներով, ուռաներով ճանապարհեցինք նրան, իսկ նա ժպտալով երկար ժամանակ ձեռքով հրաժեշտ էր տալիս» (ԹԺՀ, 417): Ընդառաջելով Շահպարտնյանի խնդրանքին՝ Թումանյանը խոստանում է այցելել Ախալքալաք:

Դուրս գալով Ուրավելից և հասնելով Աբասթուման՝ Թումանյանը հաստատվում է Վարդագարյանների տանը, ուր պատրաստվում էր մնալ մինչև Ախալքալաք գնալը՝ օգոստոսի 12–13-ը: Վարդագարյանները մտադիր էին ավելի երկար պահել Թումանյանին, թեև նրան սրտատրոփ սպասում էին ախալքալաքցիները: Օգոստոսի 10-ին Փիլիպոս Վարդագարյանի քրոջ՝ Մարուսյայի ուղեկցությամբ Թումանյանն այցելում է Աբասթումանում Ալեքսանդր Երրորդի 1899 թ. վախճանված որդու՝ Գեորգի Ալեքսանդրովիչի պալատ: Տխուր խոհեր են պատում բանաստեղծին մարդու կյանքի անցողիկության վերաբերյալ: «Ամեն բան, ինչպես թողել է, այնպես էլ մնում են. կիսատ թողած Նանսենի ճանապարհորդությունը սեղանի վրա, շորերը իրանց տեղը կախած, հուշատախտակի վրա ինչ-որ խզված... Տխուր-տխուր մտքեր են ծագում մարդու հոգում: Տեսնում ես՝ ինչպես անցնում է մարդ և միայն իր հետքն է մնում, և այն էլ նայած կարողացել է թողնել, թե չէ» (9, 272): Ալեքսանդր թագավորի աղջկա սքանչելի այգուց վարդեր է քաղում և իբրև հաշտության նշան ուղարկում կնոջը¹¹:

Մի շաբաթ Աբասթումանում մնալուց հետո, օգոստոսի 13-ին կամ 14-ին, Թումանյանը մեկնում է Ախալքալաք, որտեղ հասնում է գիշերվա ժամը տասին, և իջնանում է Շահպարտնյանների տանը: Այդ ընտանիքի մասին Թումանյանը գրում է. «Այն տունը, ուր ես հրավիրված էի, ուր մնում էի, մի հրաշալի ընտանիք է՝ Շահպարտնյան» (9, 277): Թումանյանն առաջին իսկ օրվանից տեղի հարուստների հրավերքներից հանգիստ ու դադար չունեք. «ամեն օր ճաշին մի տեղ ենք լինում, ընթրիքին՝ ուրիշ տան՝ շրջապատված շատ լավ մարդկանցով, միանգամայն ամենաքաղցր տպավորություններով եմ թողնելու այս քաղաքը, ուր այնքան սեր ու պատիվ ցույց տվին ինձ» (9, 274):

Այս հանգամանքը նույնիսկ տեղի ոստիկանության ուշադրությունն է գրավում, և նա հետաքրքրվում է, թե ով է այդքան մեծ սիրո և հարգանքի արժանացած մարդը: Թումանյանը նվերներ էր ստանում ոչ միայն Վարդագարյաններից, Մարուսյայից և ընկեր-բարեկամներից, այլև անձանոթ մարդկանցից: Այսպես, մի արհեստավոր արծաթե գրիչ է նվիրում, «որ նրանով գրեմ» (9, 274):

Թումանյանը Ախալքալաք էր եկել՝ անձամբ տեսնելու Փարվանա (Թափարվան) լիճը և Թմկաբերդի ավերակները, որովհետև լեզենդն առաջին անգամ լսելուց հետո միանգամից մտադրվել էր գրել «Փարվանան» և «Թմկաբերդի առումը»: Տարբեր երկերի ժողովրդական տարբերակները Թումանյանին պատմել էր Ջավախեցին, որն իր հերթին օգտվել էր «Հագարան բլբուլի»՝ Գանձայից Պատշինոնց Ավենի, Սաթխեցի Կարոյի պատմած տարբերակներից (ԹԺՀ, 429):

¹¹ Թումանյանին դուր չէր եկել զոքանչի և աներոջ՝ Հովհաննես քահանա Մարտիրոսյանի որոշումը՝ երեխաներին իր կամքին հակառակ տանել Շուլավեր, որովհետև ինքն արդեն Աղբուլաղում ամառանոց էր վարձել նրանց համար երկու ամսով:

Թումանյանը հինգ օր շարունակ շրջում էր Ախալքալաքի սարերում ու ձորերում, հիանում բնության տեսարաններով. «...Ինչ-որ ուրախ տրամադրություն է ստեղծվում, կարծեք ժպտում է երկինքը» (ԹԺՀ, 418): Ականատեսները վկայում են, որ Ախալքալաքն իր սիզավետ խոտերով, ծաղկավետ բլուրներով, վճիտ աղբյուրներով ու ջրվեժներով Թումանյանի վրա խոր տպավորություն է թողնում: Ասում են, որ նա ժպտալով կրկնում էր. «Բիբլիական Եդեմը հենց էս է, որ կա...» (ԹԺՀ, 418):

Ախալքալաքում գտնվելու վեցերորդ օրը Թումանյանը մեկնում է Թմկաբերդ, որը գտնվում էր քաղաքից արևմուտք՝ մոտ 15 կմ հեռավորության վրա, Քուռ գետի անդնդախոր ձորերում: Ճանապարհին բանաստեղծն արտահայտում է թռչելու, թևեր ունենալու և ինքնաթիռի նման սավառնելու երազանքը. «Ա՛խ, ինչ լավ կլինեք, եթե մարդիկ թևեր ունենային կամ թևերին փոխարինող մի բան...» (ԹԺՀ, 418): Այս ցանկությունը ծնվում էր նաև ձիով գնալու անհարմարությունից: Ախալքալաքից Գյումուրդա գնալու ճանապարհին Թումանյանը Ջալալ Տեր-Գրիգորյանին, Վարդան Շահպարտյանին և մյուս ուղեկցողներին բացատրում էր Թմկաբերդի ավերակները տեսնելու իր մեծ ցանկությունն ու հետաքրքրությունը, գրողի համար իր ապագա հերոսների, տեղագրության ու միջավայրի հետ ծանոթանալու անհրաժեշտությունը: Կեսլուրջ, կեսկատակ Թումանյանը ասում է. «Չէ՞ որ էս գորքերի ու ճակատամարտի մասին եմ գրում, պիտի անձամբ տեսնեմ՝ բերդի մոտ հարմարություն կա՞ գորք շարժելու...» (ԹԺՀ, 402): Ճանապարհին ոգևորված որոշ հատվածներ է արտասանում «Թմկաբերդի առումից» ու «Հազարան բլրուլից»:

...Հասնում են Գյումուրդա հայկական գյուղը, որը Քուռ գետի ձորաբերանին էր՝ Թմկաբերդի դեմուղեմ: Իջնանում են այդ գյուղում, հանգստանում, որովհետև դեպի Թմկաբերդ ձորն իջնելու համար այլևս ձիու ճանապարհ չկար: Մոտ հարյուր քայլից ձորագլխից բացվում է տպավորիչ տեսարան, ահռելի ձոր՝ 1000–1500 մ բարձրությամբ ցից-ցից ժայռեր, օձապտույտ զլորվող-գալարվող գետ, այգիներ և դեպի արևմուտք փռված մի գեղեցիկ լճակ՝ ձոխ բուսականությամբ: Հենց Գյումուրդայի այդ բարձունքից է Թումանյանը հեռադիտակով դիտում Քուռի հովտի վեհ, ահարկու, բայց և գեղեցիկ տեսարանը, Թմուկ բերդի ավերակները: Ներկաներից Ջ. Տեր-Գրիգորյանը, այդ պահին Թումանյանին նմանեցնելով գորահրամանատարի, լուսանկարում է նրան: Երկար դիտելով վայրի գեղեցկությամբ հմայող բնության տեսարանը՝ Թումանյանը ծոցատետրում նշումներ է անում, պատկում խոտերի մեջ և ժպտալով ասում. «Ա՛խ, թևեր, թևեր... այստեղից ուղղակի կթռչեինք Թմկաբերդ... վայրենի վեհություն, գմայլելի փարթամություն...» (ԹԺՀ, 419–420): Այդ թևերը բանաստեղծական վառ երևակայության թևերն էին, որոնցով նա փորձում էր թափանցել դարերի խորքը և բնության վայրենի վեհության ու գմայլելի փարթամության մեջ հայտնաբերել բնության խորհուրդը:

Մոտ երկու ժամից վերադառնալով՝ Թումանյանը Շահպարտյաններին խնդրում է պատմել Թմկաբերդի ավանդությունները՝ հույս ունենալով որն է մանրամասն ավելացնել իր իմացածին: Ավանդության նոր տարբերակի փոխարեն Թումանյանին պատմում են, որ 1860-ական թվականներին մի քուրդ

հովիվ ավերակներում պատահաբար գտել էր հայերեն մի եկեղեցական գիրք ու մի զանգ՝ հայերեն մակագրությամբ, ինչպես նաև այլ իրեր, որոնք հանձնել է Ախալցխայի հոգևոր հայրերին:

Այնուհետև Թումանյանը, շրջագայելով Ախալքալաքում, լինում է Տավշան-թափա ծաղկավետ բլրակում, Թափարվան գետակի ժայռոտ մեծ ձորում և Քառասուն աղբերանց ծաղկավետ ձորակում: Մի երկու անգամ էլ գնում է ձուկ որսալու: Թումանյանին պատվելու համար քաղաքի հասարակությունը, հավանաբար, օգոստոսի 21-ին ճաշկերույթ-հանդես է կազմակերպում Թափարվան գետակի ափին՝ Վարդան Շահպարտյանի քաղաքամերձ շոգեջրաղացի երկրորդ հարկի դահլիճում: Ներկա էին մոտ 150 մարդ: Կանայք եկել էին ազգային տարագով: Թումանյանն արտասանում է Ուրավել այցելած դեպի Փարվանա և Թմբկաբերդ իրեն ուղեկցող ախալքալաքցիների խմբի մասին գրած իր բանաստեղծությունը, «որով ներկա եղողներին հմայեց ու ապշեցրեց» (ԹԺՀ, 403):

Շրջակա գյուղերում նույնպես խանդավառություն է առաջանում: Գանձայից և այլ վայրերից հրավերներ է ստանում: Եկել էր Ղազար Տեր-Գրիգորյանը (Ջավախեցի) և Թումանյանին հրավիրում էր Գանձա: Ու թեև Թումանյանը մտադիր էր մերժել հրավերը ու վերադառնալ Թիֆլիս, սակայն Ջավախեցու համառությունը մեծ էր, բացի այդ մեծ էր նաև Թումանյանի ցանկությունը տեսնել Փարվանա լիճը, որը Գանձայից երեք կմ հեռավորության վրա էր: Ավելին, ըստ Ջավախեցու հուշերի, Թումանյանն ինքն էր նամակով խնդրել ուղեկցել իրեն. «Ղազար ջան, գալիս եմ Փարվանի փերիներին տեսնեմ, կգաս Ախալքալաք, որ առաջնորդես»¹²:

Եվ օգոստոսի 22-ին Թումանյանը Ախալքալաքից ուղևորվում է Գանձա: Այդ երեսուն կիլոմետրն անցնելու համար Թումանյանին ձի են առաջարկում: Բանաստեղծին տխրեցնում է այդ տանջալից ճանապարհը ձիով գնալու հեռանկարը, բայց երկաթուղու մասին երազելով, այնուամենայնիվ, ճանապարհովում է:

Գանձան գավառում հայտնի էր իբրև ամենաառատ ու բազմերանգ ծաղիկներ ունեցող բնության, բարձրադիր լեռների միջև ծվարած մի գյուղ: Ամեն ամիս իր հատուկ ծաղկախումբն ուներ, մայիսից մինչև սեպտեմբեր նույնիսկ արտերն ունեին գունավոր փարթամ գորգի տեսք: Թումանյանին ներկայացնում են այն ճանապարհները, որոնք տանում են Գանձա. և՛ ամենակարճ 25 կիլոմետրանոց ճանապարհը, որն անցնում է Աբուլ սարով՝ լեռնոտ ու քարքարոտ, բայց գեղատեսիլ, և՛ երկարը Սաթխայինը՝ դաշտավայրով, սակայն ոլորապտույտ. նրա երկարությունը 35–40 կմ էր: Բանաստեղծին առաջարկում են ընտրել, որ ճանապարհով գնալ, որով վերադառնալ: Նախ, Թումանյանը, նայելով գեղեցիկ, բայց շատ աշխույժ ձիուն, վախեցած կարկամում է. «Չէ, Ղազար ջան, չէ, էդ խելառի հետ գլուխ չունեմ ես (ձիուն մասին էր խոսքը), ինձ համար էշի երիշով մի խելոք ձի գտիր, որ Հիսուսի պես հանգիստ նստեմ վրան, դու էլ Պետրոս առաքյալի նման առաջ ընկիր ու հարթ, հանգիստ ճանապարհով տար

¹² Այդ նամակը մեզ անհայտ է, նրա բովանդակությունը պահպանվել է միայն Ջավախեցու հուշերում (ԹԺՀ, 429):

ինձ Երուսաղեմ» (ԹԺՀ, 430): Գտնվում է «խելոք ձին», և Թումանյանն ընտրում է երկար ճանապարհը, որպեսզի հնարավորություն ունենա ծանոթանալու գավառի ավելի մեծ մասին: Երբ հասնում են Ջիգրաշեն գյուղին, Թումանյանը հետաքրքրվում է անվան ստուգաբանությամբ: Պատասխան չստանալով՝ հանձնարարական է տալիս. «Բա չես ամաչում, գրականությամբ պարապող մարդ, ամեն օր անցնում ես էս գյուղի մոտով ու մինչև հիմա չգիտես նրա անվան ծագումը: Անշուշտ, մի հետաքրքրական ավանդության հետ կապված կլինի, անպատճառ կիմանաս ու մանրամասն կգրես ինձ» (ԹԺՀ, 431): Անցնելով Ղափուրմա, Օրոճալար գյուղերով, հասնում են Սաթիսա, որտեղից գիշերով նրանց խմբին միանում են երկու ուսուցիչ, որոնցից մեկը նստում է բանաստեղծի ձիու գավակին, մյուսը՝ Ջավախեցու: Մեծ ու փոքր Արագյալ գյուղերն անցնելուց հետո ձիերից իջնում են և ոտքով բարձրանում Ս. Հովհաննու սարը: Թումանյանի վատառողջ լինելն իրեն զգալ է տալիս. նրա խնդրանքով մի քանի անգամ հանգստանում են: Թողնելով հասուն արտերի ոսկե շղթան՝ հաղթահարում են Թումանյանի համար ոչ այնքան դյուրին ճանապարհը և հասնում սարի գագաթին, որտեղից բացվում է սքանչելի տեսարան՝ Փարվանա լիճը: Թումանյանի հիացմունքը բնության այդ տեսարանով դառնում է վարակիչ, փոխանցվում մյուսներին՝ այն աստիճան, որ Ջավախեցու մեջ նկարիչ լինելու անզուսպ ցանկություն է առաջանում, որպեսզի կարողանար կտավի վրա անմահացնել Թումանյանի՝ բնության նկատմամբ պաշտամունքի այդ անմոռանալի պահը, բնության անսահման գաղտնիքների մեջ թափանցելու բանաստեղծի ձգտումը. «Ո՛վ կարող էր թափանցել ...այդ գաղտնիքը, եթե ոչ միայն մեծ բանաստեղծը, որ Պուշկինի արձակի պես ձեռքերը խաչած կրծքին՝ որպես բնության սքանչելի գեղեցկությունը լրացնող զարդերից մեկը, իր բարձր հասակով քարացել էր Ս. Հովհաննու կատարին ու արծվի խորաթափանց հայացքը հառել էր դիմացը նազանքով խլիլացող, հմայիչ այդ լճի խորքերը» (ԹԺՀ, 432): Բնության կախարհող տեսարանի, ծաղիկների շքեղության և բուսական առաջացրած խորհրդավոր լռությունը հանդգնում է խախտել Հովհ. Թումանյանը. «Ես կարծում էի, թե Լոռուց գեղեցիկ տեղ չկա աշխարհում... Ձեր Ջավախքն անցավ Լոռուց... Էն էլ առանց ծառ ու թփի» (նույն տեղում): Երկար նստում են Ս. Հովհաննու կատարին: Թումանյանը ոգևորված մերթ հատվածներ է արտասանում իր բանաստեղծություններից, մերթ անեկդոտներ պատմում տեսած-ապրածից: Նրան շրջապատողները դեռ երբեք Թումանյանին այդպես վերացած չէին տեսել. «Փարվանի «փերիները» գերել էին Լոռվա կտրիճին» (նույն տեղում):

Երբ գիշերվա ժամը 3-ին հասնում են Վահան Տերյանի հայրական տունը, տեսնում են ոտք դնելու տեղ չկա: Գյուղի բոլոր ուսուցիչները, ուսանողները, լսելով Թումանյանի գալու լուրը, երկար սպասելուց հետո պարզապես մնացել էին գիշերելու այնտեղ. քնած էին թախտին, հատակին և ամենուր: Հաջորդ օրը կեսօրին 10–15 հոգով ճամփա են ընկնում Փարվանա: Տեղացիների վկայությամբ՝ լիճը, որ միշտ պարզ ու վճիտ է եղել, այդ օրը Թումանյանին դիմավորել է կատաղած «ձագը կորցրած վագրի պես» մոնչալով, հուժկու ալիքներով: Ծրագրված էր Թումանյանին նավակով տանել լճի խորքը՝ Փարվանա իշխանի սպիտակ սպարանքը տեսնելու, սակայն փոթորկված լիճը, որից նույնիսկ

«ծառու էին լինում» եկվորների ձիերը, թույլ չի տալիս: Լճի հուզմունքը փոխանցվում է Թումանյանին. «Իր երկար բազուկները մեկնած դեպի լիճը, մերթ գոռում էր լճից ավելի բարձր, արտասանում քառյակներ, մոնոլոգներ, մերթ բողբոջում, մերթ աղերսում» (ԹԺՇ, 434):

Մինչդեռ վերադարձի ճանապարհին բանաստեղծը լուռ էր: Հավանաբար, արդեն խորհում էր Փարվանա դստեր, անշեջ սիրո և հանուն այդ սիրո թիթեռներ դարձող Փարվանա կտրիճների մասին, որովհետև տեղ հասնելով՝ անմիջապես առանձնանում է և հենց Տերյանների տանն է սկսում շարադրել «Փարվանան»: Դուրս գալով սենյակից՝ բոլորի համար արտասանում է «Փարվանայի» նախերգանքն ամբողջությամբ.

*Բարձրագահ Աբուլն ու Մթին սարեր
Մեջք մեջքի տված կանգնել վեհափառ,
Իրենց ուսերին Չավախքից էլ վեր՝
Բրոնած պահում են մի ուրիշ աշխարհ...*

Եվ անմիջապես ստեղծագործական թռիչքի պահի բերկրանքը լիուլի վայելյալ թանաստեղծն անցնում է թամադայական իր պարտականություններին՝ զգալով, որ ստեղծել է իր լավագույն, անմահ գործերից մեկը: Լսածի ու տեսածի տպավորությունները, ներշնչանքն ու ապրվածը ակնթարթորեն մի կախարդական ուժով վերածվել էր բնության ու մարդկային հոգու գեղեցկությունների հոգեբանական առումով դեռևս անորսալի գեղարվեստական պատկերի: Իրականությունը որպես հոգեբանական ազդակ միահյուսվելով բանաստեղծի գեղարվեստական երևակայությանը, ձևավորում է երկրային ու հեքիաթային գեղեցկության հանդեպ մարդ արարածի հիացմունքը, նրա երազանքի ու անդիմադրելի ձգտման հարատևությունը:

Ստեղծագործական հզոր թռիչքի պահը չի խանգարում Թումանյան-մտածողին սեղանի շուրջը խոսք ու զրույց բացել Նիցշեից, Տոլստոյից, քրիստոնեական վարդապետությունից, կյանքից, գրականությունից ու փիլիսոփայությունից: Թումանյանի հիմնական գրուցակիցը դառնում է Վահան Տերյանի հայրը՝ Սուքիաս Տեր-Գրիգորյանը, որի բանիմացությունը գիտական, փիլիսոփայական աշխատություններից, ռուս դասականներից զարմացնում է բանաստեղծին¹³: Գանձայում անցկացրած երեք օրերի ընթացքում Թումանյանը անչափ մտերմանում է նրա հետ: Վահան Տերյանը գրում է. «Շատ անգամ հորս հետ խոսելով՝ լուսացնում էին ողջ գիշերը, և երկուսն էլ չէին կշտանում» (ԹԺՇ, 436):

¹³ Վահան Տերյանի հայրը դպրոց չէր ավարտել, սակայն ինքնակրթությամբ ձեռք էր բերել գիտելիքների հսկայական պաշար: Ինքնուրույն սովորել էր ռուսերեն, իսկ Ալֆրեդ Դրեյֆուսի դատավարության օրերին, արդեն 60 տարին անց լինելով, սկսել էր ֆրանսերեն սովորել, որպեսզի Չոլայի ելույթները բնագրով կարդար: Նրան շատ էր հուզել այն հանգամանքը, որ վերջինս իր համարձակ ելույթների համար մեղադրվել և դատապարտվել էր մեկ տարվա ազատազրկման, թեպետ անցնելով Անգլիա՝ խուսափել էր բանտարկությունից:

Մոտ երկու շաբաթ մնալով Ախալքալաքում, որը նրա համար անցավ «երկու օրի նման», Թումանյանը հեռանում է հարուստ տպավորություններով՝ իր բաժանումով տխրեցնելով բոլոր նրանց, ովքեր վայելում էին իր ներկայությունը. «Իմ տանտիրուհին ինձ ճամփու դրեց մի հեռացող որդու նման և առհասարակ ամբողջ ընտանիքը» (9, 277):

1901 թ. օգոստոսի 27-ին Թումանյանն ուղևորվում է Ալեքսանդրապոլ: Ղա-րախաչի սարերում փոթորկի ու ձյան պատճառով ստիպված մնում է կայարա-նում: Հաջորդ օրը՝ օգոստոսի 28-ի առավոտյան, հասնում է Ալեքսանդրապոլ, իջևանում հյուրանոցում. «Բայց մի ժամ տևեց հյուրանոցը» (9, 277): Գալիս է Ա-վետիք Բսահակյանը՝ քույրերի հետ և միասին կառքով հասնում են Ղազարա-պատի իրենց կալվածքը: Հանդիպման պահին՝ ողջագուրումից անմիջապես հետո, Թումանյանը խնդրում է ուղևորություն կազմակերպել դեպի Անի, որը Ղազարապատից 25 կմ տարածության վրա էր: Թումանյանը և Բսահակյանը դիմում են Հովհաննես Կոստանյանին, որպեսզի վերջինս ուղեկցի իրենց Անի, քանի որ նա բազմիցս եղել էր Անիում, ուսումնասիրել, պարբերաբար տեղե-կություններ հաղորդել ակադեմիկոս Ն. Մառին Անիի և նրա շրջակայքի մա-սին, աջակցել էր Անիի պեղումների նախապատրաստական աշխատանքնե-րին, Անիի մասին բավականաչափ նյութեր ուղարկել Ղ. Ալիշանի «Այրարատի» համար: Բնականաբար, Հ. Կոստանյանն ուրախությամբ համաձայնում է, և ե-րեք բանաստեղծները օգոստոսի 30-ին ուղևորվում են Անի: Բսահակյանը նշում է. «Օհաննեսը անհամբեր էր, ուզում էր շուտով տեսնել Անին» (ԹԺՀ, 13): Ճանապարհին կանգ են առնում Ղազարապատում՝ Ավ. Բսահակյանի մորը տեսնելու համար: Այդ երկու օրվա ընթացքում Թումանյանը ջրադացպանից և գյուղացիներից գրի է առնում հեքիաթներ ու ժողովրդական երգեր, հարցու-փորձ անում «Հազարան բլբուլի» մասին: Այդ շրջանում երկաթուղին հասնում էր մինչև Ադին. երթնեկում էին միայն բեռնատար գնացքներ: Ադինից այցելու-ները սովորաբար ոտքով էին գնում, հասնում Արփաչայ և անցնելով գետը՝ բարձրանում Անի: Այդ ճանապարհով ուղևորվեցին նաև բանաստեղծները՝ ո-րոնք ճանապարհին բավական ժամանակ ունեին գրուցելու Անիի պատմութ-յունից, ճարտարապետությունից, արաբների արշավանքներից, կործանարար երկրաշարժից...: Եվ երբ բարձր-բարձր գրուցելով հասնում են Անիի պարիսպ-ներին ու բուրգերին՝ Ավագ դռանը, լսում են հրազենի կրակոց: Գիշերով ավե-րակ քաղաքի մեռելային լռությունը խախտեց նաև դուրս թափված թափառող շների հաչոցը: Ավ. Բսահակյանը հիշում է. «Մթության մեջ պայթեց հրացանը, որի գնդակն անցավ մեր երեքիս առաջով, էթե մի քայլ առաջ լինեինք, ով գիտե ինչ պիտի լիներ մեր վիճակը» (ԹԺՀ, 14): Շփոթված բանաստեղծների վրդով-մունքին և բացականչություններին դարպասների միջև հայտնված վանատան պահապանը՝ հրացանը ձեռքին, բացատրում է, որ վանահոր՝ քաղաք գնալու պատճառով ավերակներում միայնակ է մնացել և քանի որ դաշտային աշխա-տանքներն էլ վաղուց էին ավարտվել՝ ոտնաձաներ լսելով կարծել է՝ ավազակ-ներ են: Ավ. Բսահակյանը բառացի վերարտադրում է այդ գրույցը.

«— Տո՛ւ,— ասաց Օհաննեսը ծառային, բերդանկա հրացանը տեսնելով,— մի գյուլով երեք բանաստեղծի պիտի սպանեի ր:

– Լավ պրծաք, ըսել է՝ ձեր վերջը չէր եկեր, – ամենայն անտարբերությամբ պատասխանեց ծառան» (ԹԺՀ, 14):

Պատահական հրազենի կրակոցից փրկված՝ հաջորդ օրը Թումանյանն ընկերների հետ քայլերն ուղղում է Մայր եկեղեցի, լինում է պալատում, աշտարակում, Ծաղկոցա ձորում, Հոռոմոսի նշանավոր վանքում, հիանում նրա՝ սքանչելիք համարվող նախագավիթով: Հովհ. Կոստանյանը նկարում է Հովհաննես Թումանյանին և Ավետիք Բսահակյանին Աշոտ Ողորմած թագավորի դամբարանի աջ ու ձախ կողմերում կանգնած: Անին իր հոյակապ ճարտարապետությամբ մեծ տպավորություն է թողնում. «Օհաննեսը հիացմունքով և ուշով դիտում էր ամեն մի բեկոր՝ արվեստի կնիք կրող: Լուռ, մտասույզ թափառում էր՝ անցյալի հետ ներքին խոսակցությամբ տարված, կանգնում էր հրաշակերտ շենքերի առաջ, հայացքը լարած նայում էր սյուներիին, կամարներիին, քանդակներիին, ապա աչքերը գոցում և ականջները լարում, կարծես մի երաժշտություն էր լսում ո՛չ սովորական, ո՛չ այս աշխարհից», – վկայում է Ավ. Բսահակյանը (ԹԺՀ, 14): Մյուս ականատեսը՝ Հովհ. Կոստանյանը, ավելացնում է. «Թումանյանը հաճախ այդ հուշարձանների առաջ կանգնած բացականչում էր. «Ի՛նչ հոյակապ ճարտարապետություն, որքա՛ն բարձր մշակույթ է եղել, որքան ճաշակ, եռանդ և աշխատանք, և դարերից հետո նայում են էնպես, կարծես երեկ են շինվել» (ԹԺՀ, 463):

Դեռ Անին չտեսած՝ Թումանյանը ցանկություն ուներ դրամա գրել Հովհաննես Մմբատ Բագրատունու (1021–1047) կյանքից, որը, թեպետ «թանձրամիտ ու թանձրամարմին», գրասեր ու իմաստասեր մարդու համբավ ուներ: Կարելի է միայն պատկերացնել, թե որքան դառնացած, հայրենիքի փառավոր անցյալի կորստյան վիշտը հոգում, ծանրացած սրտով է Հայոց ազգային բանաստեղծը հեռացել հայոց երբեմնի փառավոր մայրաքաղաքի ավերակներից: Երբ Անիի պարիսպներից դուրս է եկել, մի վերջին անգամ հետ է նայել և ասել. «Ինչքան մարդ պետք է անբան-անասուն լինի, որ ձեռք բարձրացնի այս հրաշալիքների վրա... Մի թե այս գեղեցկությունը պիտի մեռնի առանց հետք թողնելու հայկական և ուրիշ ժողովուրդների արվեստի վրա... Այսօր զարգացման ի՛նչ աստիճանի հասած կլինեք մեր արվեստը, եթե թուրք-թաթար ցեղերը չքայքայեին մեր ժողովրդին» (ԹԺՀ, 14–15):

Արևը մայր չմտած՝ Թումանյանն ընկերներով հասնում է Աղին: Քանի որ բեռնատար գնացքը դեռ չկար, խարույկ են վառում և թեյի սեղանի շուրջ հավաքում շրջակա գյուղերի բնակիչներին, նրանց հետ զրուցում Ալեքսանդրապոլ–Երևան երկաթգծի, ցարիզմի վերաբերմունքի, աշխատանքային պայմանների և այլնի մասին:

Սեպտեմբերի 1-ի լույս 2-ի գիշերը Անիից Ալեքսանդրապոլ հասած բանաստեղծներին դիմավորում են և նույն օրը՝ սեպտեմբերի 2-ի երեկոյան նրան ուղեկցում են քաղաքային ակումբ Մխիթարյան միաբանության 200-ամյա հորելյանի նվիրված միջոցառմանը: Մխիթարյանների գործունեության մասին զեկուցել է Պ. Մոճոռյանը, ներկայացրել են երկու վոդևիլ, եղել է ասմունք, հա-

մերզ՝ դերասան Խաժակի, երաժիշտ-դաշնակահար Նիկ. Տիգրանյանի և այլոց մասնակցությամբ¹⁴:

Անի կատարած առաջին ուղևորությունից հետո Թումանյանը սեպտեմբերի 2-ին խոստովանում է. «Հոգնած եմ ու ծանրաբեռնված տպավորություններով... Աշխարհքում եթե մի քանի լավ բաներ կան – մեկն, անշուշտ, ճանապարհորդությունն է: Ըճանապարհորդելով մարդու և՛ աչքն է բացվում, և՛ սիրտը: Իզուր չեն ասել, թե շատ կարդացողը չի իմանալ, շատ ման եկողը կիմանա: Մանավանդ գրողի համար» (9, 279):

Անիից վերադարձած բանաստեղծները քաղաքից ստացած իրենց տպավորություններն արտահայտում են Վենետիկի մխիթարյանների միաբանությանն ուղղված շնորհավորական հեռագրում՝ շեշտելով. «Ըճանապարհորդելով... մենք անդադար հիշում էինք ձեր բազմավաստակ միաբանությունը, որ պանդխտության մեջ երկու հարյուր տարի շարունակ երգեց ու պատմեց մեր տխուր հայրենիքն ու նրա ավերակները...» (9, 279): Ընդգծում էին նաև Մխիթարյանների մշակութային մեծ ավանդը՝ առաջինը մայրենի լեզվով եվրոպական հանճարներին հային ծանոթացնելը և երախտագետ սրտով ողջունելով պանծալի հորեյանը. «Համբուրում անմահ Մխիթարա և նրա մեծանուն հետևորդների շիրիմները» (9, 280):

Սեպտեմբերի 4-ին Թումանյանը գնացքով հասնում է Ղարաքիլիսա, որտեղ նրան դիմավորում են Թումանյանի համագյուղացիներից Մամիկոնյան Երվանդը և Թումանյանի հորաքրոջ թոռը՝ Տիրուհին: Ղարաքիլիսան Թումանյանի այս ճամփորդության վերջին կանգառն է, որտեղից Թումանյանը վերադառնում է Թիֆլիս:

ПУТЕШЕСТВИЯ ОВАНЕСА ТУМАНЯНА В 1901 ГОДУ

СУСАННА ОВАНЕСЯН

Р е з ю м е

Ованес Туманян придавал очень большое значение путешествиям в жизни писателя, считая, что они лучше всего обогащают духовный мир творческого человека, принося ему новые впечатления. Его жизненные условия, постоянная стесненность в денежных средствах и долги серьезно препятствовали этому. Хотя друзья-попечители неоднократно пытались изыскать возможности для зарубежных поездок поэта, попытки эти обычно были неудачными. В самом начале XX столетия Туманяну наконец-то удается выбраться из Тифлиса и снова побывать у себя на родине, в Дсехе, а также совершить относительно длительное путешествие по некоторым регионам Армении и Грузии. Он побывал в Шулавере, Уравеле (Белый Ключ), Абастумане, Ахалкалаке, Гандзе, Александрополе, Казарпате, Эчмиадзине,

¹⁴ «Մշակ», 1901, № 192:

Ани, Боржоме, Ахалцихе, Караклисе и других местах Лори, Ширака и Джавахка. Путешествия 1901 года стали знаменательным явлением в творческой биографии не только в силу богатства впечатлений, но и потому, что позволили поэту на какое-то время отрешиться от всепоглощающих будничных забот и заниматься литературным трудом, явились хорошим стимулом для творческой работы. На основании собранного во время этих путешествий богатого фольклорного материала Туманян написал такие замечательные произведения, как «Парвана», «Взятие крепости Тмук», легенду «Душегуб» (*«Հոգեհուս»*) и другие.

HOVHANNES TUMANYAN'S TRAVELS IN 1901

SUSANNA HOVHANNISYAN

S u m m a r y

Tumanyan believed that travelling played a great role in any writer's life, enriching greatly creative personality's inner world and bringing him new impressions. But the life conditions, means' constant restrictions and debts always threw obstacles in his way. In spite of the fact that his friends and curators again and again tried to find possibilities for poet's foreign travels their attempts were usually unsuccessful. During the first years of the 20th century Tumanyan at last manages to get out of Tiflis and visit his birthplace, Dsegh, as well as to have a relatively long tour to some regions in Armenia and Georgia. He goes to Shulaver, Uravel (Beliy Klyuch), Abastuman, Akhalkalak, Gandza, Alexandropol, Ghazarapat, Echmiadzin, Ani, Borzhom, Akhaltsikha, Gharakilisa and other places in Lori, Shirak and Javakhk. So these tours of 1901 became a significant phenomenon in his creative biography not only for wide impressions but also for the fact that they gave Tumanyan a chance to get away from absorbing everyday troubles and to devote himself to literary work. In other words they turned out to be perfect stimuli for his work. On the ground of the rich folk material gathered during travelling Tumanyan wrote such remarkable works, as "Parvana", "Capture of the Fortress "Tmuk", legend "Հոգեհուս" ("Torturer") and others.